



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

37

U-67

ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐ
ՄԻԱՅԵԼ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆՑ
ՔԱՅՈ 8

(1880-1908)

(ՎԱԻՆԵՐԱՑԵԱԼ, ԱԶԳԱՑԻՆ ՊԱՏՐՈՒԱՐ-ԲԱՐԱՆՔՆ)



Վ. ԵՒ Հ. ՏԵՐ - ՆԵՐՍԵՍԻԱՆ, Կ. ՊՈՂՆՈ

1912


$$\begin{array}{r} \underline{37} \\ \underline{4} - 678 \\ 300 \\ \hline 1344 - 400 \\ \hline \end{array}$$



ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՇՈՒՐԻՔ

ՄԻԱՑԵՍԼ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆՑ ՀԱՅՈՑ

(1880-1908)



(ՎԱԻԵՐԱՑԵԱԼ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԸ)



1003
11994

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Վ. ԵՒ Հ. ՏԵՐ - ՆԵՐՍԻՍԵԱՆ, Կ. ՊՈԼԻՍ

1912

28 JUN 2013

44.660

ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐ

ՄԻԱՅԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆՑ ՀԱՅՈՑ

Ն Պ Ա Տ Ա Կ

Յօդ. 1. Բնկերութեան նպատակն է Թուրքիոյ Հայաբնակ Գաւառաց մէջ կրթութիւն տարածել :

Յօդ. 2. Բնկերութիւնը ազգային իշխանութեանց վերաբերեալ գործերու չմիջամտեր, ազգային կամ քաղաքական ոչ մի կուսակցութեան չի վերաբերիր և իր նպատակն գուրս ո՛ւ և է խնդրով չի զբաղիր :

Յօդ. 3. Բնկերութեան կերպոնտեղին է Կ. Պոլիս և տարեգուին է Սեպտեմբեր 1 ը :

Յօդ. 4. Բնկերութիւնը իր նպատակը կը գործադրէ հետեւեալ կերպով, իր միջոցներուն ներած չափովը .

Ա. Նախակրթարաններ բանալով և վարելով .

Բ. Կրթական, զիւղանանտեսական և արհեստական ծրագիրներ պատրաստելով .

Գ. Վարժագետանոցներ և վարժուհնոցներ բանալով ու վարելով .

Դ. Գիւղանանտեսական և արհեստագիտական դասընթացքներ ու վարժարաններ բանալով ու վարելով .

Ե. Գրենական օժանդակութեամբ ազգային նախակրթարաններուն օգնելով .

Զ. Ժողովուրդին համար գիշերային դասեր, հրապարակային դասախոսութիւններ եւ ընթերցարաններ հաստատելով.

Է. Դասագիրքեր տպելով և գիշամանտեսական, մանկավարժական, սուողջապահական ու արհեստագիտական պարբերական հրատարակութիւններ ընելով.

Ը. Դպրոցական գրավաճառանոցներ բանալով:

Յօդ. 5. Ընկերութիւնը կրնայ բարերարներու անունով և հաշուոյն հաստատութիւններ բանալ, որոնք ենթակայ պիտի ըլլան Ընկերութեան Կանոնագրի ու ծրագրի արամադրութեանց:

Յօդ. 6. Ընկերութիւնը Օսմ. ու Ազգ. Սահմանադրութեանց համաձայն ուղղութիւն մը կուտայ իր ծրագրին:

Յօդ. 7. Ընկերութիւնը իր կրթական և նիւթական գործունէութեանց մէջ բոլորովին անկախ է ո և է ազգային կամ ուրիշ մարմնէ մը և երկրին օրինական արամադրութիւններէն դուրս ամէն միջամտութիւն կը մերժէ:

ԿԱԶՄՈՒԹԻՒՆ

Յօդ. 8. Ընկերութիւնը կը կազմուի բաժանորդ Անդամներէ, և կ'ունենայ Հիմնադիր Ժողով մը, Տնօրէն Ժողով մը և Մասնաճիւղեր:

Յօդ. 9. Ամէն հայ, որ ազգային կամ քաղաքային դատապարտութիւն մը չէ կրած, կրնայ Անդամ ըլլալ Ընկերութեան՝ ընդունելով ներկայ Կանոնագրի արա-

մադրութիւններն ու վճարելով իրուեւ մուտքիւ առուրք՝ առնուազն 20 դահնեկան և իրբե ամսաբաժին՝ առնուազն 5 դահնեկան արծաթ:

Յօդ. 10. Ամէն անոնք՝ որ ամսական 5 զրուցն նուազ կը վճարին՝ կը կոչովին նույրատու:

Յօդ. 11. Ամէն Անդամ՝ որ վեց ամիս չէ վճարած իր ամսական բաժինը՝ կը գրկուի իր սնդամակցութեան իրաւուգներէն:

Յօդ. 12. Անդամներու իրաւունքներն են.

Ա. Հիմնադիր Ժողովի բնտրութեան քուէարիկութեանը մասնակցիլ, պայմանաւ որ 6 ամիս անդամակցած ըլլան Ընկերութեանս և վճարած վեցամսեայ բաժնեգինը ու մուտքի առուրքը.

Բ. Ընարելի ըլլալ Հիմնադիր Ժողովի անդամակցութեան պայմանաւ որ մայրաքաղաքս բնակին.

Գ. Պահանջմել և ստանալ տարեկան տեղեկագիրն ու հաշիւը և զրաւոր կարծիք յայտնել:

Յօդ. 13. Պատույ անդամ պիտի հոչակուի Ընկերութեան բարոյական մեծ ծառայութիւն մը մատուցմանդ կամ առնուազն 50 ոսկուց միանուագ նուիրատուութիւն մընող անձը: Խակ Բարերար անդամ պիտի հոչակուի այն անձը որ բարոյական նշանակելի աջակցութիւն մը կամ առնուազն 500 ոսկուց գումար մը կը նուիրէ միանուագ:

ՀԻՄՆԱԴԻՐ ԺՈՂՈՎ

Յօդ. 14. Հիմնադիր ժողովը Ընկերութեան օրէ նըսղիր ու համարառու մարմինն է և կը բաղկանայ 48 անդամներէ :

Յօդ. 15. Հիմնադիր ժողովի շրջանը 8 տարի է և երկու տարին անդամ մը անոր $\frac{1}{4}$ ը վիճակով կը դադրի մինչեւ որ ամբողջովին նորոգուած ըլլայ : Անկէց վերջը $\frac{1}{4}$ ի դադարումը տեղի կ'ունենայ ընտրութեան կարգով : Դադարեալ անդամները վերընտրելի են :

Յօդ. 16. Հիմնադիր ժողովի ո ե է պատճառառ դադարեալ անդամներուն յաջորդները քուէից մեծամասնութեամբ կ'ընտրուին կ. Պոլիս գանուող Անդամներու դադանի քուէարկութեամբը : Քուէարկութեան օրէն 15 օր առաջ կը յայտարարուի բոլոր Անդամներուն՝ դիւրութեան համար եռապատիկ ցանկ մը զրկուելով անոնց Մայր-Դիւանին կողմէ :

Յօդ. 17. Հիմնադիր ժողով կը գումարուի ամէն աարի Յունիսի վերջին շաբթուն, քննելու և վաւերացընելու համար պիւամէն : Խոկ Դեկանմբերի առաջին շաբթուն կը վաւերացնէ Ընկերութեան հաշիւները :

Յօդ. 18. Հիմնադիր ժողովը արտակարգ նիստ ալ կ'ընէ Մայր-Դիւանի կամ Տնօրէն ժողովի որոշումով և կամ գէթ 10 անդամներու գրաւոր առաջարկով :

Յօդ. 19. Որպէս զի Հիմնադիր ժողովի նիստը օրինաւոր ըլլայ, Ատեանի բացմանը համար անդամներուն կէսէն մէկ աւելիին ներկայութիւնը և որոշմանց համար

ալ՝ այդ մեծամասնութիւնը կազմող ներկայից կէսէն մէկ աւելիին միաբանութիւնը անհրաժեշտ է :

Յօդ. 20. Ամէն անբաւական նիստէ հատքը՝ ի հարկին յաջորդ օրը՝ նոր նիստ կը գումարուի միւսնոյն օրակարգով և այս նիստը օրինաւոր կը նկատուի անդամներուն վէ էն մէկ աւելիին ներկայութեամբը, այս պարագան Մայր-Դիւանի կողմէ գրաւոր կերպիւ ազդարարուելով նախապէս բոլոր անդամներուն և մինչև այդ օրակարգին աւարտումը յաջորդ նիստերուն մէջ ալ նոյն թիւով կրնայ չարունակուիլ, սակայն որոշմանց համար այդ մեծամասնութիւնը կազմող ներկայից կէսէն 1 աւելիին միաբանութիւնը անհրաժեշտ է :

Յօդ. 21. Օրուան Պատրիարքը կը հրաւիրուի նախագահել Հիմնադիր ժողովի նիստերուն :

Յօդ. 22. Հիմնադիր ժողովը կը հրաժարեցնէ իր այն անդամը որ Ընկերութեան օրէնքներուն ու շահերուն հակառակ կը գործէ կամ գատապարտութիւն կը կրէ ազգային կամ քաղաքային յանցանքի մը համար :

Յօդ. 23. Հրաժարեալ կը համարուին այն անդամները որոնք յաջորդական 4 նիստերէ բացակայ կը գըտնուին՝ առանց բանաւոր պատճառ յայտնելու :

Յօդ. 24. Հիմնադիր ժողովը կ'ընարէ իր Մայր-Դիւանը որ կը բաղկանայ Ատեանապետէ մը, Ատեանապետէ մը, Դեր-Ատեանապետէ մը և Գեր-Ատեանապետէ մը : Մայր-Դիւանի պաշտօնավարութիւնը երկամնայ է : Անդամները վերընտրելի են :

Յօդ. 25. Հիմնադիր ժողովը կ'ընարէ նուև երեքական անդամներէ բաղկացած կրթական Դիւան մը և Ելմասական Դիւան մը :

Այս Դիւանները կ'ընտրեն իրենց Ատենապետը և կը
ծանուցանեն Մայր-Դիւանին, կը քննեն Հիմնադիր Ժոռ-
դովին կողմէ իրենց յանձնուած խնդիրները և կը տեղե-
կադրեն անոր:

Յօլ. 26. Մայր-Դիւանի և Կրթական ու Ելմտական
Դիւաններու անդամները չեն կրնար անդամակցիլ Տնօրէն
Ժողովին:

Յօլ. 27. Հիմնադիր Ժողովը ամէն տարի հինգ
անդամէ բարկացած Հաշուեքնիչ Յանձնախումը մը
կ'ընտրէ որ Դիկանքներին սկիզբը վերջացած տարւոյն
հայւոը կը քննէ և իր տեղեկագիրը կը պատրաստէ:
Այս պաշտօնագիրը 41 րդ Յօլուածով յիշուած տեղե-
կագրին կը կցուի:

Յօլ. 28. Հիմնադիր Ժողովը կը զրադի Ընկերու-
թեան վերաբերեալ բոլոր ինդիբներով և զլիսուորար՝
Ա. Կընտրէ Տնօրէն Ժողովը.

Բ. Կը քուէարկէ տարեկան ելմտացոյցը.

Գ. Կը վաւերացնէ տարեկան հաշիւները.

Դ. Կը քննէ և կը վաւերացնէ տարեկան տեղե-
կագիրը.

Ե. Կը վաւերացնէ կրթական ծրագիրները.

Զ. Տնօրէն Ժողովին առաջարկներն ու բայցարու-
թիւնները լսելէ յետոյ՝ կ'արտօնէ նոր վարժարաններու
բացումը և հիներուն ալ վակումը եթէ հարկ տեսնէ:
Իսկ պիւտէն ասպահովուած ո և է դպրոցի բացումը
Տնօրէն Ժողովը կրնայ կատարել իր պատասխանատուու-
թեան ներքեւ, Հիմնադիր Ժողովի յաջորդ նիստին վա-
ւերացնել տալու պայմանով:

ՏՆՕՐԷՆ ԺՈՂՈՎ

Յօլ. 29. Ընկերութեան նպատակին գործադրու-
թիւնն ու գործերուն վարչութիւնը կը յանձնուի եօթն
անդամներէ բազկացած Տնօրէն Ժողովի մը զոր Հիմնադիր
Ժողովը կ'ընարէ իր անդամներուն մէջէն կամ գուրսէն:

Յօլ. 30. Տնօրէն Ժողովի պաշտօնավարութիւնը ե-
րեք տարի է: Անդամները վերընտրելի են:

Յօլ. 31. Տնօրէն Ժողովը ընորելով իր Դիւանը՝
Ատենապետ, Ատենապետ՝ կը տեղեկագրէ
Մայր-Դիւանին որ հրատարակութեան կուտայ և կը հա-
զորդէ Ազգ՝ Վարչութեան ի գիտութիւն:

Յօլ. 32. Տնօրէն Ժողովի մէն մի անդամ պատաս-
խանատու է թէ՛ Տնօրէն Ժողովին և թէ Հիմնադիր Ժո-
ղովին: Տնօրէն Ժողովը հաւաքարար ալ պատասխանա-
տու է Հիմնադիր Ժողովին:

Յօլ. 33. Եթէ անդամներէն մին կամ մի քանին
հրաժարին, նոր ընտրութիւն կը կատարուի: Նոյնպէս
նոր ընտրութիւն կը կատարուի այն անդամներուն տեղ
որոնք յաջորդաբար չորս նիստերէ բացակայ կը մնան,
առանց բանաւոր պատճառ յայնելու:

Յօլ. 34. Տնօրէն Ժողովը արածնուած է կրթական
ու Ելմտական գործերու կամ Ընկերութեան վերաբերող
ո և է ինդրի մը համար իր պատասխանատութեան
տակ մասնախումբեր ընտրել, որոնք պարտաւոր են իրենց
համարատուութիւնը ներկայել Տնօրէն Ժողովին:

Յօլ. 35. Տնօրէն Ժողովը կը պատրաստէ տարեկան

ելմտացոյցը Յունիսի մէջ և կը գործադրէ զայն Հիմնադիր Ժաղացին վաւերացումէն յետոյ։ Նոյնպէս ի՞նք կը պատրաստէ կրթական ծրագիրները զորս Հիմնադիր Ժողովի վաւերացման հնթարկելէ յետոյ կը գործադրէ։

Յօդ. 36. Տնօրէն Ժողովը իր այլեւայլ գործառնութիւններուն համար պարտի ունենալ պաշտօնական տոմարներ, որոնք գործածուելէ պուած թուահամարով ու թուականով վաւերացուած պիտի ըլլան Մայր-Դիւանի կնիքով ու սաորագրութեամբ։

Յօդ. 37. Եթէ Տնօրէն Ժողովը կալուած կամ արժեթուղթ գնել և կամ ծախել ուզէ, պարտաւոր է պատճառաբանեալ տեղեկագրով մը դիմել Հիմնադիր Ժողովին որ իր Ելմտական Դիւանին կամ յատուկ մասնախումբի մը քննութեան հնթարկելէ յետոյ կուտայ իր վճիռը։

Յօդ. 38. Տնօրէն Ժողովի Գանձապեաը ապահով դրամատան մը կը յանձնէ իր քով հաւաքուած դրամը երբ 200 ոսկին անցնի։

Յօդ. 39. Ընկերութեան ընդհանուր հասոյթներու 5%ը ապահով դրամատան մը մէջ պահեստի կը դրուի։

Յօդ. 40. Տնօրէն Ժողովը ապահով դրամատան մը մէջ կը պահէ իբր անձեռնմխելի դրամագլուխ՝ հետեւ հասոյթները։

Ա. Այդ նպատակաւ եղած նուիրատուութիւններն ու կտակները։

Բ. Մուտքի տուրքերը։

Գ. Պատույ ու Բարերար անդամներու նուիրատուութիւններէն անոնք որոնք անձեռնմխելութեան հակառակ պայման չեն պարունակեր։

Յօդ. 41. Տնօրէն Ժողովը ամէն տարեշրջանի վերջիր պաշտօնավարութեան համարատուութիւնը կ'ընէ Հիմնադիր Ժողովին յատուկ տեղեկագրով մը որ պիտի պարունակէ։

Ա. Ծնկերութեան ընդհ. ելեւմուտքը մանրամասնօրէն։

Բ. Մասնաճիւղերուն ու անոնց անդամներուն անունները։

Գ. Բացուած դպրոցներն, անոնց պաշտօնեաներուն ու աշակերտաներուն թիւը, ուսուցման առարկաներն ու վճարուած թոշակները։

Դ. Պահեստի գումարին և անձեռնմխելի դրամագլուխներին քանակութիւնը։

Ե. Իւրաքանչիւր նուէրի կամ նպաստի տեսակն ու քանակութիւնը։

Զ. Կեդրոնական ծախքերն ու կարասիները։

Է. Վիճակագրական տեղեկութիւններ։

Ը. Դասագիրքերու տպագրութեան և այլ գործառնութեանց հաջիւը։

Թ. Տեսչութեանց տեղեկագրերը, և ազգային ու օտար մարմիններու հետ փոխանակուած թղթակցութիւններէն յարմար դաստիածները։

Երբ Հիմնադիր Ժողովը այս ամէնը վաւերացնէ, տեղեկադիրը կը տպուի ու կը հրատարակուի։

Յօդ. 42. Տնօրէն Ժողովը պարտի Մամուլի միջոցաւ հրատարակել տարեկան հայիւններուն ամիսոփումը։

ՄԱՍՆԱՃԻՒՂԵՐ

Յօդ. 43. Ընկերութիւնը ամէն Հայարնակ տեղերու մէջ կ'ունենայ Մասնաճիւղ մը՝ հինգէն մինչեւ հօին անդամներէ բաղկացած՝ զորս Տնօրէն Ժողովը կ'ընտրէ տեղւոյն Անդամներուն մէջէն :

Յօդ. 44. Կ. Պոլիսի մէջ ո՛ւ և է թաղ և Կ. Պոլսէ դուրս ո՛ւ և է քաղաք մէկէ աւելի Մասնաճիւղ չկրնար ռանենալ :

Յօդ. 45. Իւրաքանչիւր Մասնաճիւղ ընարելով իր Դիւանն ու Գանձապետը, կը տեղեկագրէ Տնօրէն Ժողովին :

Յօդ. 46. Մասնաճիւղեր ուն պաշտօնավարութիւնը եռամեայ է : Անդամները վերընարելի են :

Յօդ. 47. Մասնաճիւղերուն պաշտօնն է .

Ա. Բաժանորդներուն թիւը շատցնել և բաժնեգիններուն կանոնաւոր գանձումին վրայ հսկել .

Բ. Գանձապետն հաշխւները քննել ամէն երեք ամիս և արդիւնքը նշանակել ատենական արձանագրութեան մէջ .

Գ. Ամէն երեք ամիս Տնօրէն Ժողովին դրկել հաշխւներն ու գանձուած դրամը .

Դ. Տեղական միջացներով նպաստ հաւաքել և արդիւնքը դրկել Տնօրէն Ժողովին, առանց սպասելու եռամեայ հաշուետուութեան : Բնդհանուր նպաստահաւաքումները Տնօրէն Ժողովի հաւանութեամբ միայն կրնան կատարուիլ .

Ե. Տնօրէն Ժողովի յանձնաբարութեան վրայ տեղական դպրոցի մը, անոր պաշտօնէութեան և կամ ընդհանուր նպաստի վերաբերեալ որոշումները գործադրմէ :

Յօդ. 48. Մասնաճիւղերը Ընկերութիւն դպրոցներու վրայ ո՛ւ և է իրաւասութիւն կամ միջամտութեան իրաւունք չունին, ցորչափ Տնօրէն Ժողովը չ'աւտօնէ զիրենք առ այդ :

ՎԵՐԱՔՆԵՐԻ ԹԻՒՆ

Յօդ. 49. Այս կանոնագիրը վերաքննելի է վեցտարին անդամ մը, բայց եթէ Հիմնադիր Ժողովի անդամներուն երկու երրորդին զբաւոր առաջարկովը ու և է Յօդուածի փոփոխութիւն պահանջուի՝ Հիմնադիր Ժողովը կրնայ զումարուիլ և կանոնագրին այդ Յօդուածը կամ Յօդուածները վերաքննել :

Յօդ. 50. Սոյն կանոնագիրը, ինչպէս նաև ամէն նոր փոփոխութիւն, Ազգային Վարչութեան կը ներկայացուի վասերացմնն համար :

ԴԱԴԱՐՈՒՄ

Յօդ. 51. Եթէ երբէք Բնկերութիւնը ու է պատճառաւ դադարման ենթարկուի, Ազգային Կեդրոնական Վարչութիւնը տէր կը կանգնի յանուն Ազգին Ընկերութեան բոլոր ընչից ու ստացուածոց և կը յատկացնէ զայնս Հայաբնակ Գաւառաց կրթութեան գործին :



«Ազգային գրադարան



NL0229087

44.660